ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N 362 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 26-Ի N 1069-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածները՝

1. Հայաստանի Հանրապետության վարչապետի 2024 թվականի նոյեմբերի 26-ի «Կենսաբանական բազմազանության մասին կոնվենցիայի կողմերի 17-րդ (COP17) համաժողովի կազմակերպման և անցկացման կոմիտե ստեղծելու և դրա կազմը և աշխատակարգը հաստատելու մասին» N 1069-Ա որոշման (այսուհետ՝ որոշում) մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումը՝

1) որոշման N 2 հավելվածի 9-րդ կետի 1-ին ենթակետում «հանձնաժողովի» բառը փոխարինել «կոմիտեի» բառով.

2) որոշման N 2 հավելվածի 9-րդ կետի 2-րդ ենթակետում «աշխատանքային խմբի» և «հանձնաժողովի» բառերը փոխարինել «կոմիտեի» բառով.

3) որոշման N 2 հավելվածի 13-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասությամբ՝

«Ձայնագրությունները պահվում են շրջակա միջավայրի նախարարությունում։».

4) որոշման N 2 հավելվածի 14-րդ կետը շարադրել հետևյալ բովանդակությամբ՝

«14. Կոմիտեի քարտուղարը կոմիտեի նիստի ավարտից հետո 5-օրյա ժամկետում կազմում է արձանագրություն և պաշտոնական էլեկտրոնային փոստով ուղարկում է կոմիտեի նիստերին ներկա անդամներին՝ համաձայնեցման: Արձանագրությունը ստանալուց հետո կոմիտեի նիստերին ներկա անդամների կողմից 5 աշխատանքային օրվա ընթացքում կարող է ներկայացվել առաջարկություն արձանագրության վերաբերյալ, իսկ չներկայացվելու դեպքում արձանագրությունը կհամարվի համաձայնեցված:

Կոմիտեի նիստերի արձանագրությունները սույն կետով սահմանված կարգով կոմիտեի նիստի ներկա անդամների համաձայնեցումից հետո ստորագրում են կոմիտեի նախագահը և քարտուղարը, և ոչ ուշ, քան ստորագրման օրվան հաջորդող աշխատանքային օրը կոմիտեի քարտուղարը պաշտոնական էլեկտրոնային փոստով արձանագրությունն ուղարկում է կոմիտեի անդամներին:»:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

28.04.2026
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ